

Բայց արտասուք դառնապէս  
 Այ յայն աչաց ցամաքին՝  
 Ար յերաշխէպսն Յիսուսի  
 Եւ զիւր ըզմեղսրն տեսին :  
 Բզսիրելոյն բազմառատ  
 Յիշեալ առ ինք շնորհս եւ սէր՝  
 Եւ զոր դարձուածս ոխերիմ  
 Արշուեսայ նըմին՝ արտասուէր :  
 Այր յայգս այգուն՝ նա զհաւուն  
 Բարբառ խօսից մինչ լըսէր ,  
 Ընուր ծագմանն աւետիս  
 Արմին յարտօսը էր հրաւէր :  
 Այր մինչ քարոզ յատենի  
 Այր. Յիսուսի քաղցր անուան ,  
 Անշանաց յոյս եւ խրախոյս ,  
 Աւառհաւատչեայ թողութեան :

Թողութեան . . . վաղ նըմա տըւեալ էր զայդ երկին ,  
 Եւ սիրտն ըզգայր յոր թերացեալ ինչ էր սըրտին .  
 Եւ ըզպըղծեալն յուրացութիւն անդ ըզըրթունս  
 Թէպէտ սըրբեալ իբրեւ դսկի՝ հուր հեծութիւնս ,  
 Բայց հառաչմամբ ի դողդոջել ոչ դադարեաց՝  
 Աինչ ի խաչին եւս յաթողոյ ոչ դաւանեաց .  
 Եւ արտասուք աչացն ի զեղջ ոչ կասեցին  
 Աինչեւ զարինն ոչ լացին :

Հ . Խ . Գ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեծն Պետրոս :

Առևսաց տէրութիւնը կերպարանա-  
 փոխ ընողը մեծն Պետրոս՝ Ալէքս Աի-  
 քայէլովիչ կայսեր օրդին էր , և անոր  
 մահունէն ետքը թագաւորութեանն  
 ալ ժառանգ . վասն զի իր անդրանիկ  
 եղբայրը՝ Ֆէոտոր կամ Թէոդորոս վա-  
 զամեռիկ եղեր էր , ու երկրորդն ալ Ա-  
 լան՝ թէ մտքովը և թէ առողջութիւն  
 տկար ըլլալով՝ թագաւորելու իրաւուն-  
 քէն զրկուեր էր : Բայց Ստրելիցք , որ  
 Տաճկաց Անիէրիներուն նման զօրաց  
 խումբ մը կը սեպուէին , Սոփիա իշխա-  
 նուհւոյն գրգռութեամբը ոտք ելան ,  
 և կ'ուզէին որ Ալան նստի կայսերական

աթոռ . և այն ատեն իրաւամբ յոյս  
 ունէր Սոփիա՝ զօրաւոր ազդեցութիւն  
 մը բանեցընելու կառավարութեան մէջ :  
 Այսպիսի ընտանի երկպառակութիւն  
 և քաղաքական կռիւ մը վերցընելու  
 նպատակաւ՝ սահմանուեցաւ որ երկու  
 եղբարք միաբան թագաւորեն :

Աժնդակ տգիտութեան մը մէջ էր  
 այն ատենները Ռուսիա . և Սոփիա  
 փառասէր իշխանուհին՝ Պետրոսի վրայ  
 իր տղայ հասակէն ուսման և հրահան-  
 գուելու սէր տեսնելով՝ ամէն ջանք կ'ը-  
 նէր զինքը խափանելու . կը վախէր որ  
 չըլլայ թէ ուսման և կրթութեան հետ  
 նորասիրութեան փափաքն ալ մտնե-  
 լով՝ երկրին հին կառավարութեան ոյ-  
 ժը կ'ոտրի : Բայց Պետրոս ոչ անոր  
 հրապուրանքէն և ոչ սպառնալիքներէն  
 վախցաւ . և կրթութեան բարիքը վայե-



Մեծն Պետրոս .

լողներուն մէջ փափաքելով որ ինքն ըլլայ առջինը, յիսուն հոգևով զինուորական գունդ մը ձևացուց, օտար հարիւրապետաց իշխանութեան տակ, ու գերմանացի զօրաց զգեստ հագուց անոնց . ինքն ալ մէջերնին մտնելով իբրև պարզ և աննշան զինուոր մը, կ'ուզէր որ գլխաւորը առանց իրեն իշխանութեան և աստիճանին նայելու՝ ամէն խստութիւն բանեցրնեն վրան, և երբ որ ճշմարիտ արդիւնք մը տեսնեն՝ միայն այն ատեն առաջ քաշեն զինքը : Օ ինուորական բարեկարգութիւն խօթելու վախճանը այն էր որ Պետրոս ետևէ պիտի ըլլար Ստրելիցները վերցրնելու, որոնք իրենց անկանոն ընթացքովը մեծ արգելք էին տէրութեան յառաջադիմութեանը : Նոյն ատենները Պետրոսի միտքը ուրիշ խորհրդով մ' ալ գրաւած էր, որուն գործադրութիւնը անկարելի կ'երևնար . — նաւարանի մը կառուցումը : Վետի մը մէջ հոլանտացուց հին ու երեսի վրայ ձգուած նաւ մը տեսնելով երիտասարդ իշխանը, մէկէն նոյն ազգէն ճարտարներ կանչեց 'ի Սոփուա, ու հրամայեց որ Պերեսլաւի լը-

ճին վրայ նախ քանի մը պզտի նաւեր, ետքը չորս աւելի մեծագոյն նաւեր շինեն, որոնցմէ ամէն մէկուն մէջ չորս թնդանօթ դրուին :

Սեպտեմբեր 1696ին մեռնելով, Պետրոս միահեծան տէր եղաւ պետութեանը . և իշխանութեանը առջի տարին Ղզոփի պաշարումը սկսաւ, որուն 1697ին տիրեց : Նոյն ատենէն կը մտածէր Պետրոս՝ Ներսիսի այլ և այլ կողմերը ճամբորդութիւն մը ընել, որպէս զի անոնց օրինացը, բարուց և արուեստից տեղեկութիւն ստանայ : 1697ին բոլոր Վերմանիա քաղաքէն ետքը, հոլանտայի Վանդերտամ քաղաքը անցաւ, անկէց ալ Սարտամ, որ Վանդերտամէն երկու փարսախ հեռու գեղ մըն է, իր շտեմարաններով ու ամբարանոցներով անուանի : հրահանգասէր և փութաջան կայսրը՝ իր մեծութեանը նուաստութիւն չսեպեց՝ արքունի զարդերէն մերկանալ, ու գործաւորաց մէջ խառնուելով՝ իբրև անոնցմէ մէկը աշխատիլ յոգնիլ, ու իր քրտինքովը արուեստին մէջ յառաջադիմելու գաղտնեացը խելամուտ ըլլալ : Ղզոփ բերան գործաւոր-

ները իրեն ո՛վ ըլլալը չգիտնալով, իրենց մէկ արուեստակիցը կը համարէին, ու անանկով կը վարուէին հետը. բայց ետքէն դիպուածով մը իմանալով անոր աստիճանը, ամբլջան. ու կ'ուզէին կայսերական իշխանութեան արժանի մեծարանքով վարուիլ հետը. բայց Պետրոս ամենեւին յանձն չառաւ, և ուզեց որ իրենց առջի վարմունքը ամենեւին չփոխեն: Իր կարգէ դուրս ջանքովը և համբերութեամբ՝ ամենէն աւելի ճարտար գործաւորներէն ու հմուտ նաւաստիներէն մէկը եղաւ Պետրոս: Հոն սորվեցաւ նաև երկրաչափութեան և ուրիշ քանի մը չափաբերական ուսմանց սկզբունքը. ու 1698ին հողանտայէն ելաւ՝ Լ'նգղիա անցնելու համար:

Լ'նգղիոյ մէջ փառաւոր իջևան մը պատրաստեր էին իրեն. բայց ինքն ուզեց որ իր բնակութիւնը թագաւորին քովն ըլլայ. և ինչպէս 'ի Սարտամ՝ հոն ալ բոլորովին սորվելու ետևէ եղաւ: Լ'նգղիոյ թագաւորը՝ եւրոպական արուեստով եղած կեղծ նաւական պատերազմի մը տեսարանը տուաւ իրեն. և այնչափ հաճոյ անցաւ Պետրոսի առջև այս բանս, որ Լ'նգղիայէն հեռանալու ատեն՝ այլ և այլ անգղիացի ճարտարներ հետը Ռուսաստան տարաւ, որոնց գլխաւորն էր՝ Լոյ:

Լոյն ատենները Ռուսք կ'աշխատէին՝ մասնաւոր ջրանցքով մը հոն և Վոլկա գետերը իրարու հետ միացնել. որով իրենց վաճառականութեան մեծ գիւրութիւն կ'ըլլար, ու համարձակ կրնային Սեւ ու Կասպից ծովերը և Պարսկաստան երթալ: Լոյսպիսի մեծ գործ մը առաջ տանելու համար հարկաւոր գիտութիւնը չունենալով, Պետրոս՝ Լ'նգղիացիքը գործածեց: Լոնտրայէն Վեննա անցեր էր Պետրոս, և անկէ ալ միտք ունէր Իտալիա քալելու. բայց իմանալով թէ երկրին մէջ խռովութեան վախ կայ, այս մտածմունքէն ետ կեցաւ:

Սոփիա՝ թէպէտև Պետրոսի հրամանաւ վանքի մը մէջ փակուեր էր, բայց առանձնութեանը տեղէն ալ չէր

դադրեր իր կուսակիցքը յաճախել, և անոնց ձեռքով տէրութեան խաղաղութիւնը տակնուվրայ ընել: Վայսրը՝ հազիւ կրցաւ այլ և այլ տանջանքներով, ու անոր համախոհիցը շատերուն գլուխը անձամբ կտրելով՝ քիչ մը հանդարտեցնել զինքը: Սոփիայի օգնական Ստրելիցներէն ալ շատը կամ մահուան դատապարտուեցան և կամ աքսորուեցան 'ի Սիպերիա. և անով այն գունդը որ թէ զՌուսիա և թէ զկայսրը դողացուցեր էր, ասդին անդին ցրուելով՝ բոլորովին ուժէ ընկաւ:

Պետրոս 1699ին սրբոյն Անդրէի կուշուած ասպետութեան կարգը հնարեց, ու այլ և այլ մեծամեծներու բաժնելով, ուզեց այն կերպով անոնց սիրտը իրեն քաշել: Ռուսք ռամկական աւանդութիւն մը ունէին՝ թէ Լստուած սեպտեմբերի մէջ ստեղծած ըլլայ զաշխարհ, ուստի տարեգլուխնին ալ նոյն ամսէն կը սկսէին. բայց Պետրոս համոզեց զիրենք որ ուրիշ ազգաց պէս յունուարէն սկսին, և այս նորոգութեանը յիշատակին համար 1700 դարագլխին՝ փառաւոր յոբելեան հանդէս մը ընել տուաւ, և այն առթով ուզեց որ իր հպատակները ոչ միայն իբրև երկրաւոր իշխան ճանչնան զինքը, այլ նաև կրօնից գլուխ: Եւ այն տարին՝ Եհայ (՝) գոստոս թագաւորին խրախուսանօքը և Շուետի Կարոլոս ԺԲին տղայ հասակէն սիրտ առած, այս վերջինիս դէմ պատերազմ հրատարակեց: Կուրին սկզբնաւորութիւնը այնչափ յաջող չեղաւ Պետրոսի համար. բայց ինքը՝ ըրած կորուստներովն ալ քաջութենէն չթուլցաւ. « Կիտեմ, կ'ըսէր, որ Շուետք պիտի ստիպեն զմեզ երկար ատեն հետերնին պատերազմիլ. բայց վերջապէս՝ զիրենք ընկճելու կերպն ալ իրենցմէ պիտի սորվինք: Պէտք է որ ջանանք մանր մունր պատերազմներով զիրենք տկարացնել », Պետրոսի յոյսը պարապ չեղաւ. երկար ու դժնդակ պատերազմներէ ետքը՝ 1709ին Լուլդավայի առջև փառաւոր յաղթանակ մը ստացաւ: Հոն յայտնի տեսնուեցաւ թէ

Պետրոս հմուտ առաջնորդ և կտրիճ զօրական է . և թշնամեացը իմացուց թէ որչափ իր ձեռքին տակը հրահանգուեր էր Ռուսաց բանակը : Ե ուետ զօրաց մեծ մասը գերի ընկաւ , ու իրենց դիւցազն թագաւորն ալ , Վարդուս ԺԲ , նախ Տաճկաց երկիրը փախստեամբ ապրեցաւ , ու ետքը 'ի Պէնտէր' իբրև գերի մը՝ յաղթողին առջև :

Այս յաղթութենէն ետքը՝ Պետրոս արժանի սեպեց ինքզինքը՝ ընդհանուր զօրաց տեղակալի աստիճանը ունենալու : Թշնամեաց կողմէն գերի ընկող զօրավարները իրեն սեղանակից ըրաւ , և ամէն ընտանութիւն ու վայելուչ մեծարանքը կը ցուցնէր . անոնց կենդանութեանը համար գինի կը խմէր , իր պատերազմական արուեստի մէջ ունեցած հմտութեանը վարպետ սեպելով զիրենք : Պետրոս՝ Վարդուս ԺԲ՝ հեռաւ նալը յարմար առիթ սեպելով՝ Վիլնիա և Ինկրիա գաւառաց ալ տիրեց , ու Ֆինլանտիոյ մէկ մասը՝ Րումերանիայի հետ միացուց : Ընկէ ետքը իր գլխաւոր փոյթն եղաւ Րեդրպուրկ քաղաքը ծաղկեցընել , որուն հիմունքը 1703ին դրեր էր , ու քիչ ատենէն՝ Սլոբոպայի ընդարձակ ու անուանի քաղաքաց մէկը պիտի ըլլար :

Կը շարունակուի :

### ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդութիւն Պողիկտետի 'ի Հոտոմ 1 :

ԹՈՒՂԹ Ե .

Տոռները , կանկարասիք , և այլն :

Քանի որ հոս հռոմեկեր եմ՝ իմին առջի , մանաւանդ թէ մի միայն մտածութիւնս այն եղեր է , որ այնպիսի ապահով միջոց մը գտնամ , որով կարենամ դիւրաւ հաղորդել քեզի իմին թուղթերս , ու քուկիներդ ալ դիւրաւ ընդունիլ . որովհետև մեր թղթակցութեան նիւթերը սաստիկ զգուշութիւն կը պահանջեն : Հազիւ թէ երբեմն երբեմն կը համարձակէի հոս Յունաստանի ու Իտալիոյ

1 Տես հա . ԺԳ , երես 110 :

հիմակուան իրարու հետ ունեցած վերաբերութիւններուն վրայօք հարցընելու . ու այն ծանօթութիւններն որ կ'առնէի՝ աւելի զիս վտանգի մէջ դնելու կը ծառայէին , քան թէ գործադրութեան դիւրութիւն տալու :

Վերջապէս դէպքը իմ փափաքս կատարեց . որով ասկէ ետքը համարձակ կրնամ նամակ գրել քեզի՝ առանց նեղուելու այն ցաւալից մտածութենէն , որն որ միշտ մտքիս գիմացն էր : Այս նամակները , կ'ըսէի ինքիրենս , որոնց կը վստահիմ իմ ամենէն աւելի քաղցր յիշատակներս , գուցէ անոնց սպասողին ձեռքը չեն հասնիր , ու ինծի հետ կորսուին պիտի այս օտար երկրիս մէջ՝ թէ որ բարերար մը չտանի զանոնք իբրև յետին միւթ . թարութիւն ազնիւ հօր մը : Այս բարեկամը գըտայ . և կարծես թէ որպէս զի իմ սրտիս ուրախութիւնը աւելի մեծ ըլլայ , այդ մարդը ինծի հայրենակից է : Աղէտն կը կոչուի ինքը , և խել մը տարիէ 'ի վեր հռոմ կը բնակի , ուր մեծ առուտուր կ'ընէ Յունաց արձաններու , անօթներու և ուրիշ ճարտար ձեռակերտներու . որովհետև հռովմայեցիք անոնցմով տուներնին զարդարել կ'ուզեն : Իրմէն խրկուած քանի մը մարդիկները միշտ այս բաներուս համար մեր քաղաքները կը պտտին . ու ինչ որ ուզենամ խրկել քեզի՝ ինքը իրեն անուամբը անոնց պիտի յանձնէ , որովհետև ես միայն իրեն հետ բան ունիմ : Անգամ մը երբոր հիւպատոսին ու իրեն որդւոյն հետ էի , Աղէտն ալ հոս այս տունս եկաւ , ու իրեն ետէն երկու գերի մեծարգի բաներ կը բերէին : Երբոր Ոկտաւիոս ակառ քարէ գեղեցիկ բանուած բաժակ մը զննելու հետ էր , վաճառականը ինծի մօտենալով՝ « Արնամ՝ արդեօք քեզի որ և իցէ կերպով ծառայութիւն մը ընել , ըսաւ ցած ձայնով : Վերցատքեցի այս խօսքերն որ լսեցի , ու ինքը իմ պատասխան տալէս առաջ միտքս իմացաւ : Եւ ինքը եղաւ որ ինծի հետ ծածուկ խօսելու կերպը գըտաւ : Ինչ ըսեմ : Իսկ ես աւելի իմ փափաքէս ստիպուած՝ քան թէ անոր անդադար աղաչանքներէն , ինքզինքս բոլորովին վստահացայ իրեն , ու իմին թուղթերս իրեն յանձնեցի : Հազիւ թէ այս բանս ըրի , ինծի անանկ մը երեցաւ որ շատ դիւրաւ ինքզինքս անծանօթ մարդու մը յայտնեցի . ու ամը չնալով կը խոստովանիմ որ իրեն ինծի ծառայելու մեծ փոյթը՝ միտքս անարժան կասկածներ ձգեց , որոնք դեռ բոլորովին մտքէս ելած չեն , թէպէտ և կը մտածեմ որ ինքը զիս մատնելովը ամենակին շահ մը չունի : Թէ որ ինքը ստակի սէր ունի , իրեն քուկին անուամբը խոստացած մեծ վարձքս պէտք է որ զինքը որսայ . թէ որ ազնուական սիրտ մը ունի , ինչպէս որ իրաւամբք կրնամ կարծել , վախնալու բան մը չունիմ : Սակայն ինչ ալ որ ըլլայ , ես ինքզինքս այս պիտի քաղցր թղթակցութեան մը կու տամ , որն որ միայն կրնայ ինծի միւթար ըլլալ այս աքսորանացս մէջ , և ուսկից զրկուիլը ինծի անկէց առաջ եկած ամէն վշտերէն ծանրագոյնը կ'ըլլայ :

Ոկտաւիոսի աղուն հետ ունեցած բարեկամութիւնս օրէ օր կ'աւելնայ : Իր ընդունած սքանչելի դաստիարակութեանը պատճառաւ , որն որ այն պիտի ազնիւ պարգև մըն է՝ որ կը ճոխացընէ երկտասարդը հասուն հասակին կատարելութիւններովը , և հասուն հասակին մէջ ալ երիտասարդու-